

Կ Ո Ձ

ԻՒՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԱԿԱՏԱՑՏԵԱԼՆԵՐՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի-  
տիւն, Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին ուխ-  
տագնացութիւնը դէպի Երուսաղէմ, 1963  
Հակոբեանքիւն, և իր Անձին ներկայութիւնը  
սրբատեղեաց մէջ առաւել պայծառացուց  
Հայ Եկեղեցւոյն դիմագիծը և ճշմանակալից  
դարձուց Հայոց ամուրը և մասնակցու-  
թիւնը Ս. Երկրի պատմութեան երկայնքին:  
Քրիստոսի Գերեզմանին վրայ կառուցուած  
գանգուածեղ Տաճարը Ս. Յարութեան, ի-  
րեն յատուկ խորհրդաւորութիւն մը ունի  
որ կ'առնէմէն սիրտը քրիստոնեայ ազգերու  
հաւատարար գաւակներում:

Ամէն կէս գիշերին և առաւօտեան ժամը  
երկուքին, հայ լեզուով ժամերգութիւն կը  
կատարուի և Ս. Պատարագ կը մատուցուի  
Տաճարին կամարներուն ներքեւ: Մտնու-  
տական հաւատացեալներուն համար ուրիշ  
հրապոյր մը ունի ան: Դսկ ամէն ազգէ և  
կրօնէ համարողներ, իրենց մտքին մէջ,  
գրեթէ կը ճոյնացնեն Երուսաղէմ իրենց այ-  
ցելութիւնը Ս. Յարութեան Տաճարին մէջ՝  
Քրիստոսի Գերեզմանին առջեւ, իրենց  
ծանկի գալում հետ:

Այսօր միջազգային հետաքրքրութիւն և  
կարեւորութիւն ունեցող այս սրբատեղին  
անհրաժեշտ կարիքը ունի վերաներգուելու:  
1927 տարուան ընթացքին Երուսաղէմի մէջ  
պատահած երկրաշարժի մը ցնցումներէն  
վտանգուած այս Տաճարը մտահոգութիւն  
պատճառեց Ս. Երկրի կառավարութեան,  
որ ստիպուեցաւ սահմանափակել թիւը Ե-  
կեղեցիէն ներս մտնող հաւատացեալներու,  
մանաւանդ Ջատկի հանդիսարար օրերուն և

հագարաւոր ուխտաւորներու խնդումին  
պատճառներով: Եւ ամենէն աւելի Հայ Եկե-  
ղեցւոյ գաւակները զգացին այս գրկանքը,  
Յայն և Հռոմէական Եկեղեցիներու կարգին,  
որոնց հետ հաւասար իրաւունքներ ունին  
Ս. Տեղերու հագաստարութեան և պահպան-  
ման մէջ: Հայ Եկեղեցւոյ բաժինը Սուրբ  
Յարութեան Տաճարի նարգութեան ծախ-  
քին մէջ մէկ միլիոն տուար է, որուն մէկ  
երրորդը խոստացած է հազար կիլոգրմ հաս-  
տատուած Գալուստ կիւլտնիկեան Հիմնա-  
կութիւնը: Յանախ երայտագիտութեամբ  
կը յիշենք դարերու ընթացքին մեր հայ-  
րերու կատարած երբեմն աներեւակայելի  
գոհողութիւնները դքսմի, քրտիմի և ար-  
իւմի:

Այսօր առիթը կը ներկայանայ որ մեր  
Եկեղեցւոյ և մեր Թեմին գաւակները իրենց  
օժանդակութեան բաժինը բերեն համազ-  
գային և նախնական արժէք ունեցող ձեռ-  
նարկի մը յայտարարութեամբ պատկանելու:

Ուստի, կոչ կ'ազդենք մեր Թեմին մէջ  
ապրող Հայ Ազգի բոլոր գաւակներուն, որ  
իրենց սրտարուի նուէրը տան՝ վերանա-  
յուզելու Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ  
կանգնուած Տաճարը, որպէսզի սերունդէ-  
սերունդ տեւ ձայնը Հայ ազօրքին, Հայ  
երգին և Հայ պաշտամունքին ի փառս Աս-  
տուծոյ և ի բարգաւառումն Հայաստան-  
եայց Ս. Եկեղեցւոյ:

ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Աւայնորդ

3 Մարտ, 1964